

**«Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ
ասպիրանտուրայի ընդունելության քննական հարցաշար**

Թերապևտիկ ստոմատոլոգիա

1. Գործիքների և ծայրակալների ախտահանման ժամանակակից եղանակները: Բժիշկ-ստոմատոլոգի, անձնակազմի և հիվանդների ինֆեկցիաներից պաշտպանության եղանակները:
2. Ստոմատոլոգիական հիվանդների հետազոտման ժամանակակից միջոցները և եղանակները:
3. Թերապևտիկ ստոմատոլոգիայում հետազոտման հիմնական և հավելյալ եղանակների արդյունքների գնահատականը: Բուժման անհատական պլանի կազմումը:
4. Ամբուլատոր ստոմատոլոգիական պրակտիկայում տեղային անզգայացման ժամանակակից տեխնոլոգիաները և միջոցները, տեղային անզգայացնող միջոցների ընտրությունը տարբեր պաթոլոգիաներ ունեցող հիվանդների մոտ:
5. Անհետաձգելի իրավիճակների կանխարգելումը ստոմատոլոգիայում:
6. Ֆլուորոզ, կլինիկա, տարբերակիչ ախտորոշում, բուժման սկզբունքները:
7. Էմալիերոզիա: Սեպաձև դեֆեկտ կլինիկան և բուժման սկզբունքները:
8. Ատամների կարծր հյուսվածքների ոչ կարիեսային ախտահարումների բուժումը. սպիտակեցում, լեցավորում, ուղղակի եղանակով վիճիթների պատրաստում:
9. Ատամների կարիես: Կարիեսի բուժում: Բուժիչ և մեկուսիչ տակդիրների օգտագործում:
10. Ատամների էսթետիկ վերականգնման համար նախատեսված ժամանակակից պլոմբանյութերը: Կիրառման առանձնահատկությունները:
11. Գամիկավորկ ռեստորոլոգիաներով դեվիտալ ատամի պսակային հատվածի վերակառուցում:
12. Ատամների պուլպիտի և պերիօդոնտիտի կլինիկան: Պուլպիտների և պերիօդոնտիտների կլինիկական ընթացքը և տարբերակիչ ախտորոշումը:
13. Ատամների էնդոդոնտիկ բուժման ժամանակակից եղանակներն ու միջոցները:
14. Պարօդոնտի բորբոքային հիվանդությունների կլինիկական արտահայտությունը: Միմպտոմատի կբուժումը:
15. Շարժվող ատամների ժամանակավոր շինավորում: Ատամների ընտրողական հղկում:
16. Բերանի խոռոչի լորձաթաղանթի հիվանդությունները: Կլինիկա, տարբերակիչ ախտորոշում, բուժում:
17. Բերանի խոռոչի լորձաթաղանթի վրա ՄԻԱՎ-ի արտահայտումը:
18. Խելյիտներ: Շրթունքի քրոնիկական ճաք: Կանխարգելում, բուժում:
19. Ֆիզիոթերապևտիկ ախտորոշման և բուժման ժամանակակից եղանակները և սարքերը հիմնական ստոմատոլոգիական հիվանդությունների ժամանակ: ԷԱԱ,

Էլեկտրոֆորեզ /դեպոֆորեզ/, լազերային թերապիա, վակուումային մերսում, հիդրոմերսում, բուժիչ նյութերով իրիգացիա:

20. Գլոսիտներ: Կլինիկա, բուժում:

21. Բերանի խոռոչի հիգիենան և նրանշանակությունը հիմնական ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելման մեջ: Բերանի խոռոչի անհատական հիգիենայի միջոցները և եղանակները: Բերանի խոռոչի պրոֆեսիոնալ հիգիենան:

Պարօդոնտի բորբոքային հիվանդությունների կանխարգելման միջոցները և եղանակները:

22. Ատամների կարծր հյուսվածքների զարգացման և կանոնությունների ժառանգական և ի ծնե արատները. անկատարամելո- և դենտինոգենեզ, հիպոպլազիա:

23. Ատամների վնասվածքներ: Ժամանակավոր և մշտական ատամների բուժման առանձնահատկությունները ատամիպսակի և արմատի տարբեր կտորվածների դեպքում:

24. Բերանի խոռոչի լորձաթաղանթի և շրթունքների կարմիր երիզի վրա նախաքաղցկեղային հիվանդությունների արտահայտումը: Կլինիկա, տարբերակիչ ախտորոշում, բուժում:

Վիրաբուժական ստոմատոլոգիա

1. Վերակենդանացումը և ինտենսիվ թերապիան վիրաբուժական ստոմատոլոգիայում

2. Վիրաբուժական ստոմատոլոգիական օգնության անցկացման էթիկան ու դեոնթոլոգիան:

3. Ընդհանուր և տեղային անզգայացումը վիրաբուժական ստոմատոլոգիայում

4. Ընդհանուր անզգայացման դեղամիջոցները, դրան ցբնութագիր, կիրառման ցուցումները հիվանդանոցային և ամբուլատոր (արտահիվանդանոցային) պայմաններում

5. Տեղային անզգայացման դեղամիջոցները, դրանց բնութագիրը: Տեղային անզգայացման տարբերակները, դրանց կիրառման ցուցումները

6. Պրեմեդիկացիայի տեսակները և եղանակները: Օգտագործվող դեղամիջոցները, կիրառման ցուցումները, նշանակման սխեմաները՝ կախված հիվանդի տարիքից, ուղեկցող հիվանդությունից, ալերգիայից և այլ հանգամանքներից

7. Դիմաճնոտային շրջանի բորբոքային հիվանդությունները: Օդոնտոգեն բորբոքային պրոցեսների ընթացքի տեսակի ախտորոշման կլինիկական և լաբորատոր չափանիշները (հիպոերգիա, նոքմերգիա, հիպերերգիա)

8. Դիմաճնոտային շրջանի օդոնտոգեն բորբոքային ախտահարումներով հիվանդների համալիր բուժական միջոցառումների ծրագրումը

9. Ընդհանուր և տեղային միջոցառումները օդոնտոգեն թարախակուլյոտերի և ֆլեգմոնաների բուժման համալիրում

10. Դիմաճնոտային շրջանի օդոնտոզեն բորբոքային ախտահարումներ ունեցող հիվանդների հակամանրէային և իմունաշտկող բուժումը
11. Օրոանտրա հաղորդակցության պլաստիկ փակման ժամանակակից նյութերն ու եղանակները
12. Դիմաճնոտային շրջանի սպեցիֆիկ բորբոքային պրոցեսների կլինիկական ընթացքի, ախտորոշման և բուժման առանձնահատկությունները (պալարախտ, սիֆիլիս, ակտինոմիկոզ)
13. Թքագեղձերի բորբոքային և դիստրոֆիկ հիվանդությունները
14. Թքագեղձերի հիվանդությունների ճառագայթային և ոչ ճառագայթային ախտորոշման ժամանակակից եղանակները
15. Քունք-ստորձնոտային հողի հիվանդությունները և ախտահարումները: Միոզեն, ներոզեն, արթրոզեն և պսիխոզեն խանգարումների ախտորոշումը, վերլուծությունը և վերացման եղանակները ցավային դիսֆունկցիայի միոֆասցիալ համախտանիշով, ներիտներով և ներալգիաներով հիվանդների համալիր բուժման մեջ
16. Ատամնային իմպլանտացիա: Ներտունկերի ժամանակակից տեսակները, նրանց բնութագիրը, ընտրության ցուցումները: Բերանի խոռոչի նախապատրաստումը իմպլանտացիային՝ ատամնաբնային ելունի ավելացում, սինուսիտիֆիկացում
17. Պարօդոնտի հիվանդությունների վիրաբուժական բուժման եղանակները:
18. Հիդրօքսիլ ապատիտի և կենսաթաղանթի հիման վրա ստեղծված բիոկոմպոզիցիոն նյութերի օգտագործումը պարօդոնտի հիվանդությունների բուժման վիրաբուժական եղանակների կիրառման դեպքում
19. Դեմքի ոսկրերի կոտրվածքների բուժման ժամանակ օստեոսինթեզի կատարման ժամանակակից եղանակներն ու սարքերը
20. Դիմաճնոտային շրջանի և պարանոցի ուռուցքներն, ուռուցքանման ախտահարումները և բուշտերը
21. Դիմաճնոտային շրջանի ուռուցքների և ուռուցքանման ախտահարումների ախտորոշման ժամանակակից եղանակները՝ հիվանդանոցի և պոլիկլինիկայի պայմաններում
22. Դեմքի տարատեսակ հետվնասվածքային բարդությունների կանխարգելումը, բուժումը, պրոթեզավորումը և վաղաժամ ախտորոշումը:
23. Դեմքի ոսկրերի կոտրվածքների բուժման ժամանակ օստեոսինթեզի անցկացման ժամանակակից եղանակներն ու սարքերը: Ոսկրասինթեզի եղանակների ընտրության ցուցումները:
24. Դեմքի և ծնոտների վերականգնողական վիրաբուժություն: Դիմաճնոտային շրջանի վերականգնողական վիրահատությունների ծրագրումը՝ կախված հիվանդի տարիքից, անցկացված բուժումից, արատի տեղակայումից կամ ձևախախտումից
25. Դիմաճնոտային շրջանի վերակառուցողական վիրահատությունների ժամանակ և դրանցից հետո առաջացող բարդությունները, դրանց կանխարգելումը և բուժումը:

Օրթոդոնտիա

1. Դիմաձևոտային համակարգի աճը և զարգացումը: Ոսկրային, լիմֆոիդ և նյարդային հյուսվածքների աճի առանձնահատկությունները: Աճի ցեֆալոկաուդալ գրադիենտը: Վերին և ստորին ծնոտներին բնորոշ աճի տեսակները:
2. Վերին և ստորին ծնոտների զարգացումը: Ոսկրային հյուսվածքի աճի տեսակները (4 տեսակներ): Դիմաձևոտային համակարգի աճի հսկողության ոսկրային, աճառային տեսությունները, Ֆունկցիոնալ տեսությունը ըստ Moss-ի:
3. Ճառագայթային ախտորոշման ժամանակակից մեթոդների կիրառումը օրթոդոնտիայում: ՄՌՏ-ի կիրառումը օրթոդոնտիայում:
4. Օրթոդոնտիկ ախտորոշման մեթոդաբանական ասպեկտները և բուժման պլանավորումը:
5. Դիմաձևոտային անոմալիաների բուժման ժամանակակից մեթոդները՝ օրթոդոնտիկ /սարքավորումային/, պրոթետիկ, ֆիզիոթերապևտիկ և վիրաբուժական: Միոգլինաստիկա:
6. Ժամանակակից հայացքներ ատամնաձևոտային համակարգի մորֆոլոգիական և ֆունկցիոնալ վերակառուցմանը օրթոդոնտիկ սարքավորումների ազդեցությամբ:
7. Շարժական օրթոդոնտիկ սարքերի պատրաստման ժամանակակից եղանակները:
8. Դիմաձևոտային անոմալիաների բուժման ամանական շարժօրթոդոնտիկ տեխնիկայի կիրառումը, բրեկետների տեղադրման կոնցեպցիան: Օրթոդոնտիկ աղեղներ, նրանց ձևերը, կիրառման սկզբունքները:
9. Լինգվալ տեխնիկայի օգտագործման հիմունքները: Ցուցումները, հակացուցումները, ֆիքսման եղանակները: TARG-ի և Hiro-ի մեթոդիկանները: Բրեկետների ֆիքսման անուղղակի մեթոդները:
10. Ռեցիդիվները և բարդությունները օրթոդոնտիայում: Ռենտենցիոն շրջան: Պոզիցիոնների կիրառման ցուցումները և նրանց կառուցվածքը:
11. Երեխաների և դեռահասների մոտ ատամնաձևոտային պրոթեզավորման առանձնահատկությունները: Պրոթեզավորման ձևերը, ցուցումները: Պրոթեզների կառուցվածքային տարրերը, պատրաստման եղանակները:
12. Դեմքի և ծնոտների զարգացման բնածին արատներ, նշանները, կանխարգելումը: Պիեր-Ռոբենի, Գոլդենիստի, Վանդեռվուդի համախտանիշներ: Օրթոդոնտիկ բուժօգնության կազմակերպման առանձնահատկությունները: Բնածին արատներով երեխաների խնամքի մոտեցման սկզբունքները: Մակնիլի մեթոդիկան, Կեզլիոդացոդ օբտուրատոր: Ֆունկցիոնալ սարքերի կիրառումը:
13. Օրթոդոնտիկ բուժօգնությունը ատամների և ծնոտների տրավմայի դեպքում:
14. Համակարգիչների կիրառումը բժիշկ – օրթոդոնտի կլինիկական պրակտիկայում: Ատամնաձևոտային անոմալիաների համակարգչային ախտորոշումը:

Օրթոդոնտիկ բուժման արդյունքների համակարգչային կանխատեսումը և պլանավորումը:

15. Օրթոդոնտիկ բուժման հիմունքները ծնոտների կենտրոնական փոխհարաբերության դիրքում:
16. Հենքի տեսակները և ընտրության հիմունքները օրթոդոնտիայում:
17. Ոսկրային հենքը օրթոդոնտիայում, օրթոդոնտիկ միկրոիմպլանտների տեսակները և տեղադրման հիմունքները:
18. Օրթոդոնտիկ բուժման առանձնահատկությունները պարոդոնտի հիվանդությունների դեպքում:
19. Ժամանակակից անտեսանելի շարժական օրթոդոնտիկ սարքերը, տեսակաները, կիրառման ցուցումները և պատրաստման եղանակները:
20. Օրթոդոնտիկ բուժման մեթոդի ընտրությունը ըստ պացիենտի տարիքային խմբի և անոմալիայի բարդության աստիճանի:
21. Օրթոդոնտիկ բուժօգնությունը ատամների և ծնոտների տրավմայի դեպքում:
22. Օկլյուզիան նորմալում և պաթոլոգիայում: Ատամների և ատամնաշարերի անոմալիաների ժամանակ ՔԱԾՀ-ի մորֆոֆունկցիոնալ վիճակը:
23. Բժիշկ-օրթոդոնտի կլինիկական պրակտիկայում համակարգիչների կիրառումը: Ատամնաձնոտային անոմալիաների համակարգչային ախտորոշումը: Օրթոդոնտիկ բուժման արդյունքների համակարգչային կանխատեսումը և պլանավորումը: